

**Մարզպետի տեղակալ Լևոն Մարգարյանը մասնակցեց Արարատքանկի Իջևանի մասնաճյուղի
1 տարվա գործունեության առթիվ կազմակերպված միջոցառմանը 10.10.2014թ.**

Մարզպետի տեղակալ Լևոն Մարգարյանը մասնակցեց Արարատքանկի Իջևանի մասնաճյուղի 1 տարվա գործունեության առթիվ կազմակերպված միջոցառմանը: Արդեն 1 տարի է, ինչ Տավուշի մարզկենտրոն Իջևանում գործում է Արարատքանկի մասնաճյուղը: Այդ առիթով բանկի աշխատակազմը կազմակերպել էր փոքրիկ հավաքույթ՝ նպատակ ունենալով ամփոփել մեկամյա գործունեության արդյունքները: Ներկա էին Տավուշի մարզպետ Հովհիկ Աբովյանը, Արարատքանկի խորհրդի նախագահ Բարսեղ Բեգլարյանը, Արարատքանկի գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանը, հավաքվել էին հյուրեր, բանկի հաճախորդներ, համայնքների ղեկավարներ: Մասնաճյուղի կառավարիչ Միքայել Մարտիրոսյանը համառոտ ներկայացրեց բանկի առաջին տարվա գործունեությունը, նշեց այդ ընթացքում կատարված հիմնական աշխատանքները և ձեռքբերումները: